# ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Դեկտեմբերի 6-ին տեղի ունեցած է Երուսաղեմի Պատրիարք Ամեն. Տ. Կյուրեղ Բ. Արք. Իսրայելյանի գահակալությունը մեծ հանդիսավորությամբ։ Նախ կեսօրը քիչ անց Ս. Պատրիարք Հայրը իր կրոնական և աշխարհական հետևորդներով գացած է Պաղեստինի Բարձր Քոմիսերին ապարանքը, ուր տեղի ունեցած է պաշտոնական ընթերցումը արքայական հրովարտակին, որուն հետո կատարված են պատվասիրություններ և թափորը վերադարձած է Պատրիարքարան։



Ժամը 3-ին ատենները Ս. Հակոբ մայր-եկեղեցին մեջ սկսած է գահակալության կրոնական արարողությունը ներկայությամբ ժողովրդային հոծ բազմության մը, որոնց կարգին կրոնական և աշխարհական հրավիրյալներ, կառավարական բարձրաստիճան պաշտոնատարներ, հյուպատոսներ և Բարձր Քոմիսերին կողմե Թիկնապահը Մր. Քորտըն Տըֆ։

Արարողությանց մասնակցած են բացի Միաբանության վարդապետներեն նաև Գերշ. Խադ, Ռուբեն և Մամբրե Արքեպիսկոպոսները, որոնք կարդացած են նաև Պահպանիչը, երբ Կյուրեղ Պատրիարք ծնրադիր և գլխաբաց Ս. Սեղանին վրա հանդիսավորապես արտասանած է իր Ուխտը։ Հետ այնու տեղի ունեցած է կրոնականներու աջահամբույրը և շնորհավորությունները և եկեղեցական թափորը, որուն հետևած են հրավիրյալները, կբարձրանան Պատրիարքական դահլիճը, ուր երգվելե հետո «Կոտ սեյվ տը Քինկ»-ը, Հ. Ե. Մ.-ի երգչախումբին կողմե, կատարված են պատվասիրություններ և ներկաները շնորհավորելե հետո հրաժեշտ առած։

(«Արամս» դեկտ. 15 1945 թ.)